# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

«Արմինե Հովսեփյան Էլբեկի» Ա/Ձ-ն ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԷԱՃԱՊՁԲ-26/26-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ3 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | | | |
|---|---|---|---|---|
| | ֆիրմային անվանումը | ապրանքային նշանը | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 21 | «Արմինե Հովսեփյան Էլբեկի» Ա/Ձ | Գլխարկներ | «Արմինե Հովսեփյան Էլբեկի» Ա/Ձ | Գլխարկ՝ կիսաբրդյա ներկայացուցչական (Գլխարկ՝ ներկայացուցչական) ԳՕՍՏ-16980-82: Գլխարկը կարվում է 34181 արտիկուլի կիսաբրդյա մուգ փիրուզակա¬նա¬չավուն գույնի 333 գրամ 1մ2 մակերեսային խտությամբ, 45% բրդի և 55% պոլիէսթերի բաղադրությամբ գործվածքից, բաղկացած է սև լաքապատ գլխարկահովհարից, որի ստորին հատվածը պատված է խավավոր սև կտորով: Գործվացքի բաղադրությունը՝ համաձայն ԳՈՍՏ 4659-79, ԻՍՕ 1833-2001, մակերեսային խտությունը՝ համաձայն ԳՈՍՏ 3811-72, ներկի կայունությունը՝ լվացման,թորած ջրի, քրտնքի և չոր շփման նկատմամբ, համաձայն ԳՈՍՏ 9733-83, նվազագույնը 4 բալ : Գլխարկաբոլորքը մահուդից է, վրան երկու 14մմ մետաղյա ոսկեգույն ՀՀ զինանշանի պատկերով դրոշմված կոճակով ամրացվում |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | է ոսկեգույն մետաղական մանրաթելերից հյուսված զարդապարան /հյուսապարան/: Գլխարկաբոլորքի վերևի և գագաթի միացման տեղերով անցնում է 1.5-2մմ լայնքով կապույտ կամ կանաչ գույնի 342 գր/մ2 խտությամբ մահուդից կանտեր: Ներսից գլխարկահատակի եզրագծով տեղադրվում է համապատասխան չափսի զսպանակատիպ մետաղյա ժապավեն: Միջնամասը և հատակը մշակված է սոսնձային կտորից միջադիրով և մուգ դեղնականաչավուն գույնի աստառով, բամբակյա /բիազ 100-120գր/մ2 / կտորով: Գլխարկաբոլորքի առջևի կենտրոնական մասում ամրացվում է ոսկեգույն մեծ գլխարկանշան, որը ունի դափնեպսակի վրա ճառագայթաձև օվալով և աստղով տեսք (ըստ հաստատված նմուշի): Արտադրվում են երկու տեսակով՝ կապույտ և կանաչ երիզներով, 54-64 չափսերի: Արտաքին տեսքը՝ համաձայն ներկայացված նմուշի: Գլխարկահատակի վրա ներսի կողմից կարվում է կաշվից պիտակ, որի վրա նշվում է արտադրող կազմակերպության անվանումը և գլխարկի չափսը: Փաթեթավումը՝ արկղերով, մեկ արկղի մեջ՝ 12 - 20 հատ: Արկղերը՝ պիտակավորված, որի վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, չափսերը, արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման տարեթիվը: |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

И / П Армине Овсепян Элбек в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԷԱՃԱՊՁԲ-26/26-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ3 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | | | |
|---|---|---|---|---|
| | фирменное наименование | товарный знак | наименование производителя | технические характеристики |
| 21 | - | - | - | - |